ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ РЕГИОН
«ДУХОВОЙ ОРКЕСТР АНИ» МЭРИИ Г.ГЮМРИ
ОБЩИННАЯ НЕ КОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

ՀՀ ք.Գյումրի, Իսահակյան 87/9
/հեռ.՝ +374 99 393 609/
էլ. փոստ՝ dzamuk@mail.ru/

N _____,

«01» 04 2024թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ
ՍՏԱՑՎԱԾ Է 01.04.24 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 6040

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**
**ՊԱՐՈՆ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սամսոնյան

«Անի» փողային նվագախումբը արդեն 50 տարեկան է: Այս ամբողջ տարիների ընթացքում այն երբևէ չի ունեցել պատշաճ համերգային համազգեստ: Նախկինում ձեռք բերված սև տաբատներն ու վերնաշապիկները այլևս ներկայանալի չեն նվագախմբի ներկայիս կարգավիճակի համար:

Հաշվի առնելով վերջին ժամանակահատվածում իրականացված մեծ առաջընթացը կադրային, կատարողական տեսակետից, համերգային ծրագրերի թարմացումն ու բազմազանությունը, կայուն ու հետաքրքիր նվագացանկը ամենատարբեր ունկնդրի համար, համերգների հաճախականությունը, բազմաթիվ հրավերները, որ ստանում է նվագախումբը, անհրաժեշտություն և նպատակահարմարություն կա ունենալ նոր բեմական զգեստ:

Բացի այդ, 2024 թվականին երկրում մեծ հանդիսավորությամբ նշվում է Շառլ Ազնավուրի 100 ամյակը։ «Անի» փողայինը ունի մեծ ներգրավածություն եւ նշանակալի մասնակցություն Գյումրու պաշտոնական միջոցառումներին, ինչպես նաև տարվա ընթացքում հանրապետության տարբեր քաղաքներում կազմակերպվող միջոցառումներին, որոնք ունեն պետական նշանակություն: Հավելենք նաև, որ «Անի» փողային նվագախումբը պատրաստվում է մասնակցել միջազգային փառատոնի:

Ուստի և քաղաքն ու նվագախումբը պատշաճ ներկայացնելու համար հրատապ անհրաժեշտություն է ունենալ համերգային բեմական համազգեստ: Այդ նկատառումով տարվել են աշխատանքներ համազգեստի դիզայներական լուծումները գտնելու համար՝ հաշվի առնելով նվագախմբի գործառնական նշանակությունը, ինչպես նաև նվագախմբի երաժիշտների ու գեղարվեստական ղեկավարների կարծիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ համազգեստը ձեռք բերելու համար խնդրում ենք Ձեր ֆինանսական աջակցությունը: Կից ներկայացվում է նախահաշիվը, որը կազմված է 38 երաժշտի և մեկ դիրիժորի համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ «ԱՆԻ» ՓՈՂԱՅԻՆ

ՆԿԱԳԱԽՄԲԻ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՁԱՄՈՒԿԱՇՎԻԼԻ

| | |
|---|---|
| Զգեստների հումք /39 համազգեստ/ - դրամ | 819 000 |
| Թելեր,կոճակներ,շղթաներ և պարագաներ /39 համազգեստ/ - | 85 800 դրամ |
| Կոնստրուկտավորում, լեգալավորում և կարում /39 համազգեստ/ | 624 000 դրամ |

Ընդամենը՝ 1 528 800 /մեկ միլիոն հինգ հարյուր քսանութ հազար/ դրամ